ՏՐԱՆՍ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեպտեմբեր Հոկտեմբեր 2023

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԵԴԻԱՅՈՒՄ ՎԻՃԱՐԿՈՒՄ ԵՆՔ ՏՐԱՆՍ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ» ԾՐԱԳԻՐԸ----------2
ԿԱՅԱՑԵԼ Է «ԿԱՆԱՅՔ* ԲԱԶՄԱԶԱՆ ԵՆ. ԳԵՆԴԵՐ-ՆԵՐԱՌԱԿԱՆ ՀԶՈՐԱՑՄԱՆ ՃԱՄԲԱՐԸ»----------3
«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ՀԿ-Ի ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԹԻՄԸ ԿԱՊԱՀՈՎԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՆՍ ԿՆՈՋ ՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ----------4
ՀԵՐԹԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ----------5
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿԱՐՄԻՐ ՀՈՎԱՆՈՑ ԱԿԱԴԵՄԻԱՅԻՆ----------6
ԿՈՉ ԵՆՔ ԱՆՈՒՄ ԿՐԿՆԱՊԱՏԿԵԼ ՋԱՆՔԵՐԸ՝ ՏՐԱՆՍ ԿՆՈՋԸ ԾԵԾԻ ԵՆԹԱՐԿԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՀԱՅՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ----------7
ՔՆՆԻՉԸ ԴԱԴԱՐԵՑՐԵԼ Է ՍԵՌԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԳՈՐԾՈՎ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ----------8
ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ- ՔՆՆԱՐԿՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ----------9
«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ՀԿ-Ի ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ ԼԳԲՏԻՔ ԱՆՁԻ ԾՆՈՂԸ ԿՍՏԱՆԱ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ----------10
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՍ ԵՒ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐԻՆ----------11

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԵԴԻԱՅՈՒՄ ՎԻՃԱՐԿՈՒՄ ԵՆՔ ՏՐԱՆՍ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ» ԾՐԱԳԻՐԸ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն ԻԼԳԱ Եվրոպայի ֆինանսական աջակցությամբ իրականացնում է «Պատմությունների միջոցով մեդիայում վիճարկում ենք տրանս անձանց մասին պատկերացումները» ծրագիրը, որի շրջանակում կիրապարակվի Հայաստանում և Կենտրոնական Ասիայում ապրող տրանս անձանց մասին կարևոր պատմությունների շարք, որոնք կնպաստեն տրանս անձանց խնդիրների շուրջ տեսանելիության բարձրացմանը: Այդ նպատակով, սույն թվականի օգոստոս ամսին «Իրավունքի կողմ» ՀԿ-ի համայնքային ապահով տարածքում կազմակերպվել է հանդիպումների շարք, որոնց հրավիրված էին մասնակցելու Տրանս և ԼԳԲԻՔ համայնքի տարբեր ներկայացուցիչներ, որպեսզի քննարկեն թեմայի շուրջ իրենց գաղափարները և հանդես գան առաջարկություններով: Հանդիպումների ընթացքում «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի աշխատակիցները և ԼԳԲՏԻՔ ակտիվիստները նաև զարգացրեցին իրենց հաղորդակցության հմտությունները՝ մասնակցելով թրեյնինգի, որի նպատակն էր բարձրացնել ակտիվիստների գիտելիքներն ու հմտությունները հաղորդագրությունների ձևակերպման և փորձարկման, լսարանին հասկանալու և սոցիալական մեդիայում առցանց արշավներ նախաձեռնելու համար:

Հանդիպումների շարքը վարում էր հաղորդակցման մասնագետ Աննա Էվոյանը՝ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի աշխատակից Միլենա Աբրահամյանի մոդերացմամբ: Ներկաները ներգրավվեցին ակտիվ քննարկման մեջ՝ յուրաքանչյուն առաջարկելով, թե ինչ թեմայի շուրջ կուզեր բարձրացնել հանրային իրազեկվածությունը, ինչ հետաքրքիր պատմություններ կամ փորձառություններ կան, որոնք հատուկ են տրանս համայնքին և սովորաբար ստվերում են մնում հասարակության լայն շրջանակի համար՝ պայմանավորված տեղեկատվության պակասով և նախապաշարումներով: Այս նախնական գաղափարները և առաջարկները հետագայում կծառայեն որպես ուղղություն ծրագրի մասնակիցների համար՝ պատմությունները հավաքագրելիս և հարցազրույցներն իրականացնելիս: Առաջարկները զարգացնելով հնարավոր կլինի ստեղծել բազմաբովանդակ մեդիա նյութեր՝ տրանս անձանց կյանքի, սոլիդարության, սեռականության, ինքնարտահայտման և յուրահատուկ կենսափորձի վերաբերյալ, որոնք ավելի տեսանելի կդարձնեն թե՛ տարածաշրջանի, թե՛ Հայաստանի տրանս համայնքի փորձառությունները և կարտացոլեն իրականությունը: Պատմությունները հրապարակվելու են հարցազրույցների, փոդքասթերի, ֆոտոպատմությունների տեսքով:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն, սույն ծրագիրն իրականացնելով, նպատակ ունի ոգեշնչել և ոգևորել տրանս անձանց, ինչպես նաև փոխել հասարակության կարծիքը նրանց մասին՝ կիսվելով իրական փորձառությունները ներկայացնող պատմություններով:

ԿԱՅԱՑԵԼ Է «ԿԱՆԱՅՔ* ԲԱԶՄԱԶԱՆ ԵՆ. ԳԵՆԴԵՐ-ՆԵՐԱՌԱԿԱՆ ՀԶՈՐԱՑՄԱՆ ՃԱՄԲԱՐԸ»

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը Հավասարության հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացրել է «Կանայք* բազմազան են. գենդեր-ներառական հզորացման ճամբարը», որը նպատակ ուներ տրամադրել առաջնորդության հմտություններ և հզորացնել տարբեր ոլորտներում գործունեություն ծավալող անձանց: Այս ճամբարը հանդիսանում էր «Իրավունքի կողմ» ՀԿ-ի նախաձեռնությամբ իրականացվող Տրանս ճամբարների շարունակությունը և այս տարի անցկացվեց ակադեմիայի ձևաչափով, ինչը հնարավորություն տվեց մասնակիցներին ավելի խորությամբ ուսումնասիրել և ստանալ համապարփակ գիտելիքներ գենդերային հիմնահարցերի, տարածաշրջանում ԼԳԲՏԻՔ ակտիվիզմի, մարդու իրավունքների, ֆեմինիզմի և այլ օրակարգային թեմաների շուրջ: «Կանայք* բազմազան են. գենդեր-ներառական հզորացման ճամբար»-ին մասնակցում էին շուրջ 30 տրանս, ոչ բինար և կին նույնականացող անձինք, նրանց ընտանիքի անդամները, ակտիվիստներ, ֆեմինիստական շարժման անդամներ, ոլորտի կազմակերպությունների ներկայացուցիչներ, համակիրներ և այլ հետաքրքրված անձինք:

Ճամբարի առաջին օրը մեկնարկեց մարդու իրավունքների վերաբերյալ պանելային քննարկումով, որի ընթացքում «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության փաստաբան Սոնա Հարությունյանը ներկայացրեց մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը և իրավունքների ոտնահարման դեպքերի կանխարգելման անհրաժեշտ հմտություններ, ինչպես նաև նշեց, թե ինչ կարևոր փոփոխություններ են տեղ գտել նոր քրեական օրենսգրքում: Ապա խմբային քննարկումների միջոցով մասնակիցները վերլուծեցին Հայաստանում տրանս և ԼԳԲԻՔ շարժման իրավիճակը և թե ինչ քայլեր կարելի է ձեռնարկել դրա հզարացման համար: Տեղի ունեցան հանդիպումներ սեքս աշխատողների համայնքի ներկայացուցիչների հետ, քննարկումներ ակտիվիզմի նորարարական պրակտիկաների և արդյունավետ հաղորդակցման կարողությունների զարգացման վերաբերյալ: Ակադեմիայի երկրորդ օրը տեղի ունեցավ պանելային քննարկում ոլորտի կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ Տրանս Անձանց Պաշտպանության Գլոբալ հիմնադրամի, Փինք իրավապաշտպան ՀԿ-ի, Ծնողներ Հանուն Հավասարության ՀԿ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ, որը մոդերացնում էր «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի հիմնադիր և նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը: Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները մանրամասն ներկայացրեցին, թե ինչ ծառայություններ են մատուցում շահառուներին, ինչպես կարող են ԼԳԲՏԻՔ համայնքի անդամները և համակիրները համագործակցել իրենց հետ և լսեցին ճամբարի մասնակիցների առաջարկությունները: Քննարկումներ ծավալվեցին Տրանս և ԼԳԲԻՔ անձանց շարունակական խտրականության և բռնության դեպքերի կանխարգելման, տուժածներին աջակցման արդյունավետ և արագ արձագանքման մեխանիզմների մշակման վերաբերյալ: Պանելային հանդիպումից հետո ծավալվեցին քննարկումներ ֆեմինիզմը և տրանսֆեմինիզմը Հայաստանում, առաջնորդություն և շահերի պաշտպանություն, գենդերայինն ինքնություն և սեռական կողմնորոշվածություն թեմաներով: Պանելային հանդիպումներից յուրաքանչյուրի վերջում մասնակիցներին հնարավորություն ընձեռնվեց ուղել իրենց հուզող հարցերը ներգրավված բանախոսներին և ստանալ պատասխաններ: Բացի այդ, երկօրյա ճամբարը մասնակիցների համար հնարավորություն ստեղծեց խոսելու ԼԳԲՏԻՔ համայնքում ներանձնային խնդիրների ու դրանց լուծման ուղիների մասին, ինչի արդյունքում նրանք ամուրապնդեցին իրենց կապերը:

«Կանայք* բազմազան են. գենդեր-ներառական հզորացման ճամբար»-ի ավարտին Լիլիթ Մարտիրոսյանը հանդես եկավ փակման խոսքով, հանձնեց վկայականներ, բոլոր մասնակիցներին շնորհակալություն հայտնեց ակտիվ մասնակցության համար՝ նշելով կրթության և ինքնակրթության մեծ կարևորությունը ազատ, ժողովրդավար երկիր և ներառական հասարակություն կառուցելու գործում, ապա հավելեց, որ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն, լինելով առաջին Տրանս կազմակերպությունը ՀՀ-ում և Կովկասում, ջանք ու եռանդ չի խանայելու հետագայում նույնպես իրականացնել կրթական ծրագրեր, որոնք կհանգեցնեն բարեփոխումների ի շահ Տրանս ԼԳԲԻՔ անձանց, որպեսզի համայնքի անդամներն ապրեն անվտանգ և բարեկեցիկ կյանքով:

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ՀԿ-Ի ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԹԻՄԸ ԿԱՊԱՀՈՎԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՆՍ ԿՆՈՋ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ

Ինչպես արդեն հայտնել էինք, սույն թվականի օգոստոսի 20-ին Երևանում իր իսկ բնակարանում առանձնակի դաժանությամբ սպանվել է Ադրիանա անունով 28-ամյա տրանս կին: Հանցագործը հետքերը թաքցնելու նպատակով նաև այրել էր կնոջ բնակարանը: Սպանված տրանս կնոջ ընկերները նույն օրը՝ ժամը 16:30-ի սահմաններում,ու զանգահարել էին «Իրավունքի կողմ» ՀԿ-ի հիմնադիր և նախագահ Լիլիթ Մարտիրոսյանին և հայտնել սպանության մասին:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի և 264-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 6-րդ կետերի հատկանիշներով: Սպանության հաջորդ օրը՝ օգոստոսի 21-ին, ժամը 02:40-ին, Արմավիրի մարզի 26-ամյա կասկածյալը Բավրայի սահմանային անցակետում հայտնաբերվել, ձերբակալվել և տեղափոխվել է ՆԳՆ ոստիկանության Կենտրոնական բաժին: Նա ներկայացվել է վարույթն իրականացնող մարմին, հարցաքննվել դեպքի հանգամանքների շուրջ, ինչի ընթացքում խոստովանել է, որ սպանությունը կատարել է ինքը, ապա բնակարանը հրկիզել և փորձել է Բավրայի սահմանային անցակետով հատել ՀՀ պետական սահմանը: Նախաքննական մարմնի որոշմամբ 26-ամյա քաղաքացին ձերբակալվել է: Նրա մասնակցությամբ շարունակում են կատարվել վարութային և ապացուցողական գործողություններ:

Սպանված տրանս կնոջ ընտանիքի անդամների դիմումի համաձայն՝ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության և Փինք իրավապաշտպան հասարակական կազմակերպության իրավաբանական թիմերը ներգրավել են սույն գործով և ապահովելու են իրավաբանական ներկայացուցչություն գործի բոլոր փուլերում:

Մենք շարունակելու ենք հետևել ինչպես այս, այնպես էլ այլ Տրանս և ԼԳԲԻՔ անձանց մասնակցությամբ քրեական գործերի ընթացքին՝ հետևողականորեն փաստագրելով ու հավաքագրելով խտրականության դեպքերը, և ՀՀ ոստիկանությանը հորդորում ենք իրականացնել պատշաճ հետաքննություն և մեղավորներին պատժել օրենքի ողջ խստությամբ:



ՀԵՐԹԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը տեղեկացնում է, որ կազմակերպության իրավաբանական թիմի համառ ջանքերի, ինչպես նաև դեպքի առնչությամբ տեսանելիության բարձրացման և ՀՀ պետական մարմիններին ուղղված մի շարք նամակների շնորհիվ ՀՀ Քննչական կոմիտեն վերադարձրել է տրանս կնոջից առգրավված 27,000 ԱՄՆ դոլար գումարը:

Ինչպես նախկինում տեղեկացրել էինք, սույն թվականի հուլիսի 27-ին տրանս կինը ահազանգել էր «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ՝ հայտնելով, որ իր բնակարանում ոստիկանությունը խուզարկություն է իրականացնում՝ թմրանյութերի ապօրինի շրջանառության առնչության կասկածով: Նույն օրը, Ոստիկանությունը առգրավվել էր տրանս կնոջ բջջային հեռախոսները և բնակարանում պահվող 27,000 դոլար գումարը, որը տրանս կինը հավաքել էր տարիներ շարունակ սեքս աշխատանքով զբաղվելու միջոցով:
Չնայած, որ տրանս կնոջ բնակարանում թմրանյութեր չեն գտնվել և նա քրեական գործում ունի միայն վկայի կարգավիճակ, ամիսներ շարունակ Քննչական Կոմիտեն չէր վերադարձնում նրանից առգրավված հեռախոսները և գումարը՝ թողնելով առանց ապրելու համար անհրաժեշտ միջոցների: «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի իրավաբանական թիմը հուլիսի 28-ին գույքը վերադարձնելու վերաբերյալ միջնորդություն էր ներկայացրել Քննչական Կոմիտե, դեպքի առնչությամբ ահազանգել և ֆեյսբուքյան իր էջում հրապարակում է տեղադրել «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի հիմնադիր և նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը, ինչի արդյունքում հրապարակումներ են տեղադրվել նաև մի քանի լրատվական կայքերում, ինչպես նաև կազմակերպության կողմից դիմում-նամակներ են ուղարկվել ՀՀ Պետական մարմինների՝ հորդորելով ուշադրության կենտրոնում պահել այս դեպքը և կոչ անելով Տրանս և ԼԳԲԻՔ անձանց առնչվող քրեական գործերում վարել անաչառ քննություն, զերծ մնալ ցանկանած ձևի խտրականությունից և օր առաջ վերադարձնել տրանս կնոջից առգրավված գումարը և բջջային հեռախոսները՝ վերականգնելով նրա սեփականությունը տնօրինելու իրավունքը:

Արդյունքում, սույն թվականի հոկտեմբերի 6-ին Քննչական Կոմիտեն, տրանս կնոջ գործողություններում որևէ հակաիրավական վարքագիծ չգտնելով, վերջինիս վերադարձրել է ավելի քան երկու ամիս նրանից առգրավված դրամական միջոցները և գույքը:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը շարունակելու է անել հնարավոր ամեն ինչ՝ պաշտպանելու Տրանս և ԼԳԲԻՔ, սեքս աշխատող անհատների իրավունքները, ուշադրության կենտրոնում պահելով ինչպես այս, այնպես էլ այլ Տրանս և ԼԳԲԻՔ անձանց մասնակցությամբ քրեական գործերի ընթացքը, հետևողականորեն փաստագրելով ու հավաքագրելով խտրականության դեպքերը՝ դրանց մասին բարձրաձայնելով ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մակարդակով մինչև արդարության վերականգնում:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿԱՐՄԻՐ ՀՈՎԱՆՈՑ ԱԿԱԴԵՄԻԱՅԻՆ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության ներկայացուցիչները սույն թվականի հոկտեմբերի 15-ից 17-ը Վարշավայում մասնակցել են Կարմիր Հովանոց ակադեմիային, որը կազմակերպել էր Սեքս Աշխատողների Իրավունքների Եվրոպական Դաշինքը (ESWA): Ակադեմիան նպատակ ուներ բարելավել սեքս աշխատողների հասանելիությունը ՄԻԱՎ-ի կանխարգելման և բուժման ծառայություններին: Ծրագիր ներառում էր երեք ուղղություն՝

Կարողությունների զարգացում,
Հետազոտություն,
Շահերի պաշտպանություն:

Ակադեմիայի ընթացքում տեղի ունեցան դասընթացներ ՄԻԱՎ-ի համակցված կանխարգելման գործիքների հասանելիության վերաբերյալ, ներառյալ PrEP-ը: Անդրադարձ կատարվեց սեքս աշխատողների համայնքի առջև ծառացած մարտահրավերներին, ինչպես նաև նրանց կարիքներն ու խոչընդոտները՝ կապված ծառայությունների հասանելիության հետ: Մասնակիցները իրականացրեցին փորձի փոխանակում և քննարկեցին սեքս աշխատողների, Տրանս ԼԳԲԻՔ անձանց, ինչպես նաև միգրանտների խոցելիությունը՝ պայմանավորված հասարակությունում գոյություն ունեցող խարանով և խտրականությամբ և այլ մարտահարավերներով:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության ներկայացուցիչները խոսեցին կազմակերպություն կողմից մեկնարկած նոր ծրագրի մասին, որը ֆինանսավորվում է Սեքս Աշխատողների Իրավունքների Եվրոպական Դաշինքի կողմից և նպատակ ունի Հայաստանի Հանրապետությունում շահերի պաշտպանության միջոցով բարձրացնել PrEP-ի հասանելիությունը սեքս աշխատող համայնքի ներկայացուցիչների համար:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն, որպես առաջին Տրանս և սեքս աշխատողների համայնքահեն կազմակերություն, առաջնահերթություն է տալիս Տրանս ԼԳԲԻՔ, սեքս աշխատող համայնքների համար ՄԻԱՎ-ի կանխարգելման գործիքների հասանելության ապահովմանը և շարունակելու է ընդլայնել իր աշխատանքները այդ ուղությամբ դրական փոփոխությունների հասնելու համար:

ԿՈՉ ԵՆՔ ԱՆՈՒՄ ԿՐԿՆԱՊԱՏԿԵԼ ՋԱՆՔԵՐԸ՝ ՏՐԱՆՍ ԿՆՈՋԸ ԾԵԾԻ ԵՆԹԱՐԿԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՀԱՅՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Սույն թվականի մարտի 13-ի լույս 14-ի գիշերը Ամիրյան-Զաքյան փողոցների խաչմերուկում տասից ավելի դիմակավորված անձինք մահակները ձեռքներին հարձակվել էին տրանս կնոջ վրա՝ դաժանաբար ենթարկելով ծեծի: Տրանս կինը դիմել էր փախուստի, այնուհետև, նկատելով տարածքում ծառայություն իրականացնող պարեկներին, մոտեցել նրանց օգնություն խնդրելու նպատակով, սակայն մինչ պարեկների մոտենալը դեպքի վայր, բռնարարները հասցրել էին դիմել փախուստի: Նույն օրը՝ այս դեպքից կես ժամ անց, վերոնշյալ երիտասարդները Երևանի քաղաքապետարանի տարածքում ծեծի են ենթարկել մեկ այլ տրանս կնոջ՝ պատճառելով տարբեր աստիճանի վնասվածքներ, բացի այդ Մաշտոցի պողոտայում թիրախավորել էին երկու այլ տրանս կանանց, ովքեր հասցրել էին դիմել փախուստի: Տրանս կինը դեպքի առնչությամբ դիմել էր ոստիկանություն: «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության իրավաբանական բաժինը ներգրավված է գործի շրջանակներում և ապահովում է ներկայացուցչություն գործի բոլոր փուլերում:

Մտահոգիչ է, որ արդեն 6 ամիս է անցել սույն դեպքից, սակայն ոստիկանությանը այդպես էլ չի հաջողվում բացահայտել հանցագործություն իրականացնող անձանց ինքնությունը՝ անկախ այն հանգամանքից, որ տրանս կինը նշել էր, որ հասցրել է տեսնել երիտասարդներից մի քանիսի դեմքերը, ինչպես նաև տարածքում եղել են բազմաթիվ տեսահսկիչներ, և դրանց տեսագրությունների ուսումնասիրության միջոցով հնարավոր է նույնականացնել բռնության ենթարկողներին, հատկապես որ նրանցից ոմանք դիմավավորված չեն եղել:

Տրանս և ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ խտրականությունը քրեականացնող օրենքի բացակայության և անկատար իրավակիրառ պրակտիկաների պայմաններում ոստիկանության այս անգործությունը էլ ավելի է խորացնում արդեն իսկ ձևավորված անպատժելիության մթնոլորտը և խոցելի խմբերի անդամներին պահում մշտական վախի մթնոլորտում: «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը կոչ է անում ՀՀ ոստիկանությանը կրկնապատկել ջանքերը տրանս կնոջ նկատմամբ գենդերային հիմքով բռնություն իրականացրած կազմակերպված խմբի անդամներին օր առաջ բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

ՔՆՆԻՉԸ ԴԱԴԱՐԵՑՐԵԼ Է ՄԵՌԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԳՈՐԾՈՎ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ

Մեկ տարի առաջ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը էր դիմել քաղաքացի Հ.Ա.-ն և հայտնել, որ 2021թ-ին ՀՀ զինվորական դատախազության թիվ 1 կայազորի դատախազությունում հայտարարություն է տվել հանցագործության մասին, որի վերաբերյալ հարուցվել է քրեական գործ և 4 անձի մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասի 4-րդ կետերով (խոշտանգում): Հ.Ա-ն դիմելով «Իրավունքի կողմ» ԻՀԿ-ին՝ խնդրել էր ստանձնել իր՝ որպես տուժողի շահերի պաշտպանությունը, ինչի արդյունքում 2022 թ.-ի հոկտեմբերի 5-ից «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի փաստաբանը ներգրավվել էր սույն գործով՝ որպես տուժող Հ.Ա.-ի լիազոր ներկայացուցիչ:

Հ.Ա-ն կազմակերպությանը հայտնել էր, որ 2020թ-ին, երբ գտնվել է Արցախի Հանրապետությունում ՊԲ x զորամասում, ծառայության ընթացքում՝ իր սեռական կողմնորոշման պատճառով, պարբերաբար ծեծի է ենթարկվել սպայական կազմի կողմից: Հանցագործության մասին հաղորդում ներկայացնելուց հետո՝ հարուցվել է քրեական գործ, որը Արցախի Հանրապետությունից տեղափոխվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ գլխավոր վարչության խոշտանգումների և պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելով լիազորությունները չարաշահելու կամ անցնելու հանցագործությունների քննության վարչություն:

Սույն թվականի սեպտեմբերին սույն գործով քննիչը որոշում է կայացրել 4 մեղադրյալների նկատմամբ դադարեցնել քրեական հետապնդումը՝ մեղսագրվող արարքը կատարած չլինելու հիմքով:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության իրավաբանական թիմը բողոքարկել է դատարան՝ պահանջելով վերացնել Գ. Լ.-ի, Մ. Ն.-ի, Գ. Բ.-ի և Ռ. Գ.-ի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և բողոքը մերժելու մասին ՀՀ գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարության պետ Վ. Ավետիսյանի 02.10.2023թ. որոշումները: Մենք շարունակելու ենք տուժողի շահերի պաշտպանությունը՝ մինչ արդարության վերականգնումը, և դատարանում ենք ցանկացած տիպի բռնությունը՝ հատկապես, եթե դա պայմանավորված է անձի սեռական կողմնորոշմամբ, գենդերային ինքնությամբ կամ այլ անձնային հատկանիշներով:

Ծառայության ընթացքում սեռական կողմնորոշվածության հիմքով խոշտանգման գործով քրեական հետապնդումը դադարացվել է



ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ- ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՀԱՆՈՒՆ ԾԳՆԱԺԱՄԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ

Հավասարության հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության համայնքային ապահով տարածքում տեղի ունեցավ ճգնաժամերի արդյունավետ արձագանքման և ԼԳԲՏԻՔ անձանց կարիքների գնահատման հանդիպում-քննարկում, որին մասնակցում էին ոլորտում գործող կազմակերպությունների ներկայացուցիչներ և համայնքի անդամներ:
«Իրավունքի կողմ» ՀԿ-ի, Փինք իրավապաշտպան ՀԿ-ի, Կանանց Ռեսուրսային Կենտրոն ՀԿ-ի և Տրանս Անձանց Պաշտպանության Գլոբալ Հիմնադրամի ներկայացուցիչները և համայնքի անդամները քննարկեցին ինչպես 2022 թ.-ից ի վեր սկսված ռուս-ուկրանիական պատերազմի արդյունքում առաջացած ժգնաժամի, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի ճգնաժամի հետևանքները և ազդեցությունը ԼԳԲՏԻՔ անձանց և նրանց հարազատների վրա: Այս ժգնաժամերի արդյունքում այսօր ՀՀ-ում կան բազմաթիվ ներգաղթյալներ և վերաբնակեցված անձինք, որոնցից շատերը հանդիսանում են ԼԳԲՏԻՔ համայնքի անդամ, ինչը նրանց դարձնում է կրկնակի խոցելի:

Կազմակերպությունները ներկայացրեցին, թե ինչ աջակցություններ են տրամադրում ԼԳԲՏԻՔ անձանց, ինչպես նաև տեղի ունեցավ փորձի փոխանակում ստեղծված ճգնաժամային իրավիճակը հաղթահարելու համար անհրաժեշտ կարողությունների զարգացման նպատակով: Համայնքի անդամների հետ զրույցների արդյունքում ներգրավված հասարակական կազմակերպությունները կատարեցին ԼԳԲՏԻՔ անձանց կարիքների գնահատում, ինչը հնարավորություն կտա նրանց ըստ այդ կարիքների կազմել իրենց հետագա քայլերը:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը բարձր է գնահատում ոլորտի կազամակերպությունների հետ համագործակցությունը հատկապես առկա ճգնաժամային պայմաններում և վստահ է, որ այս հանդիպումը կնպաստի, որպեսզի ներգրավված կազմակերպությունները ավելի արդյունավետորեն ծառայեն խոցելի խմբերի, մասնավորապես ԼԳԲՏԻՔ անձանց իրավունքների պաշտպանությանը և բարեկեցության ապահովմանը:

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ՀԿ-Ի ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ ԼԳԲՏԻՔ ԱՆՁԻ ԾՆՈՂԸ ԿՍՏԱՆԱ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությանն է դիմել ԼԳԲՏԻՔ համայնքի անդամի մայր Ա.Ե.-ն և հայտնել, որ լրացել է իր կենսաթոշակային տարիքը, սակայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մերժել է իր դիմումը կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ: Մասնավորապես, դիմումի մերժման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ աշխատանքային ստաժում չի հաշվառվել 1992 թվականի հունվարի 1-ից 1999 թվականի մայիսի 25-ը ընկած ժամանակահատվածը, քանի որ, թեև աշխատանքային գրքույկում կա նշում, որ դիմումատուն այդ ժամանակահատվածում աշխատել է Դիլիջանի տրիկոտաժ ֆաբրիկայի Սևանի մանաճյուղում, այդուհանդերձ էլեկտրոնային տվյալների բազայում տեղեկատվություն չկա կազմակերպության վերաբերյալ, ուստի անհրաժեշտ է դիմել դատարան:

Սույն թվականի մայիսի 23-ին «Իրավունքի կողմ» ՀԿ-ի իրավաբանական թիմի կողմից գրություն է ուղարկվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ն.Մկրտչյանին՝ խնդրանքով, որ մեկ անգամ ևս հարցում կատարվի Հայաստանի ազգային արխիվ ՊՈԱԿ և պարզել, թե Դիլիջանի տրիկոտաժի ֆաբրիկային վերաբերող արխիվային փաստաթղթերում կա՞ն Ա.Ե.-ին վերաբերելի փաստաթղթեր: Ի պատասխան այդ դիմումի, կազմակերպություն է ուղարկվել գրություն, որ Միասնական սոցիալական ծառայության կողմից սույն թվականի հունիսի 7-ին հարցում է կատարվել է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն, որտեղից պատասխանը ստանալուց հետո կրկին քննության է առնվելու Ա. Ե .-ի աշխատանքային ստաժի հաշվարկման, կենսաթոշակի նշանակման (մերժման) հարցը:

2023թ-ի հոկտեմբերի 4-ին Իրավունքի կողմ իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը ստացել է պատասխան, որ դիմումը բավարարվել է, Ա.Ե.-ն ընդգրկվել է հոկտեմբեր ամսվա վճարման ցուցակում:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը շարունակելու է տրամադրել իրավաբանական ծառայություններ ինչպես Տրանս ԼԳԲԻՔ և սեքս աշխատող համայնքների ներկայացուցիչներին, այնպես էլ նրանց ընտանիքի անդամներին ու համակիրներին՝ ապահովելով նրանց իրավունքների լիակատար պաշտպանությունը և խտրականության բացառումը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՍ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՑԻ ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐԻՆ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը OutRight International կազմակերպության ֆինանսական աջակցությամբ իրականացրել է սոցիալական օժանդակության ծրագիր, որը միտված էր թեթևացնել ԼԳԲՏԻՔ ներգաղթյալների առջև ծառացած մարտահրավերները, ովքեր հակամարտության և հետապնդումների հետևանքով հայտնվել են ծանր դրության մեջ:

Ծրագրի շահառուն կարող էին հանդիսանալ Ռուսաստանից և Ուկրաինայից ներգաղթած այն ԼԳԲՏԻՔ անձինք, ովքեր տեղափոխվել են Հայաստան՝ պայմանավորված Ուկրաինայի վրա Ռուսաստանի հարձակումով, դրան հաջորդած մոբիլիզացիայով, ճգնաժամով և Ռուսաստանի Դաշնության Պետդումայի կողմից նոր օրինագիծի ընդունումով, որը բացառապես արգելում է ցանկացած «բժշկական միջամտություն՝ ուղղված անձի սեռը փոխելուն», ինչպես նաև անվավեր է ճանաչում գենդերի իրավական ճանաչումը տրանս անձանց համար պաշտոնական փաստաթղթերում:

Սոցիալական օժանդակության ծրագրի շրջանակում թվով 15 ԼԳԲՏԻՔ ներգաղթյալներ ստացել են միանվագ ֆինանասական օգնություն, որը կարող էին ուղղել բնակարանների վարձակալության, կոմունալ վճարումների և այլ անհրաժեշտ կարիքների հոգալուն: Բացի այդ, թվով 25 ԼԳԲՏԻՔ անձինք ստացել են նաև առաջին անհրաժեշտության սննդի և հիգենայի պարագաների ծանրոցներ:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը մշտապես կանգնած է եղել մարգինալացված խմբերի կողքին և եղել է ԼԳԲՏԻՔ համայնքի իրավունքների պաշտպանության ու օժանդակության առաջնագծում: Բացի այս սոցիալական օժանդակության ծրագրից, կազմակերպությունը ԼԳԲՏԻՔ անձանց շարունակելու է տրամադրել նաև իրավաբանական, հոգեբանական օգնություն, ինչպես նաև պարբերաբար կազմակերպել դասընթացներ, ճամբարներ և այլ միջոցառումներ, որոնց կարող են մասնակցել ԼԳԲՏԻՔ անձինք ինչպես Հայաստանից, այնպես էլ արտերկրից:



RIGHT SIDE

HUMAN RIGHTS DEFENDER NGO

RightSideNGO.com

rightsidengo@gmail.com

RightSideNGO

RightSideNGO

RightSideNGO

+374 - 11 - 880 - 770

© Copyright All Rights Reserved For Right Side Ngo.